

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Պ Ա Ր Տ Ք Ե Ր Ը Ե Ւ Ի Ր Ա Ի ՈՒ Ն Ք Ը

Ա. ՊԱՐՏՔԵՐԸ

Երբ մեր ազգը առանց թագաւորի կը մնար՝ կաթողիկոսը ազգային իշխանական մարմնոյն զուլեի կը նկատուէր թէ՛ հայերէս և թէ՛ տիրապետող ազգերէ:

Եւ այսպէս Մեծին Տրդատայ մահուանէն ետք, երբ Խոսրով՝ անոր որդին չկրցաւ շուտով հօրը աթոռը ժառանգել՝ նախաւորները ու իշխանները Ս. Վրթմանէսին կը դիմեն՝ որ Խոսրովը թագաւորեցնել տայ: Ս. Յովսէփ Ա. երբ Տեղապահ կաթողիկոս ընտրուեցաւ՝ ազգը անիշխան մնացած էր, թշնամին կ'ուզէր մեր երկիրը գրաւել ու քրիստոնէութիւնը քնջել. հայրապետը Յովսէփ՝ իբր թագաւոր մը կամ հայր մը ազգին՝ կը հրամայէ նախաւորաց ու եպիսկոպոսոս՝ որ ժողովին և մտածող թէ ինչպէս պէտք է թշնամոյն դիմագրել, (Եղիշէ և Ղ. Փարպեցի):

Եթոթներորդ զարու վերջերը Մոհմատ հազարացւոց ոստիկանը՝ Հայաստանը աւերելու և նուաճելու կու գար, նոյն ժամանակի կաթողիկոսը Սահակ Զորափոքեցի՝ անոր սիրտը առնելու համար ընդ առաջ կ'ելնէ, (Ղևոնդ երէց): Նոյն հոգւով գործած են մեր բոլոր կաթողիկոսները. և ընդհանուր ազգը այդ ժամանակները ընդունած է անոր աշխարհական գերիշխանութիւնը: Եւ նոյն իսկ ունեցած ենք կաթողիկոսներ՝ որոնք մեծ ազդեցութիւն և իշխանութիւն ունեցած են հայ թագաւորին և իշխանաց վրայ: Տրդատ ինքզինքը Ս. Գրիգորի ժառանգերէն մին կը համարի և պարտաստ է անոր Հրամանները կատարելու: Արիստակէս՝ կը շանդիմանէ իր ժամանակին անկարգ իշխանները, այդ պատճառաւ կը նահատակուի:

Մեծն Երեսն անելի ցցուցած է այդ իշխանութիւնը իր ժամանակի զեղիս թա-

գաւորաց վրայ, Արշակ Բ.ի շինած Արշակաւանը կործանել կու տայ. նոյն ազդեցութիւնը ունեցած են Կիլիկիոյ կաթողիկոսները Ռուբինեան թագաւորներու վրայ. և նոյն իսկ այլազգի ոստիկանք և թագաւորք՝ մեր ազգին ներկայացուցիչը կաթողիկոսն ընդունելով՝ իրենց թուղթերը անոր ուղղած են:

Կաթողիկոսը ազգային գործերէն անելի՛ կրօնականներուն ուշադիր պիտի ըլլայ. չի պիտի ձգէ որ նորանոր աղանդներ և ծեսեր ժողովրդեան մէջ ընդհանրանան, և իրեն է իշխանութիւնը զանոնք արտասելու, այդ պատճառաւ Ատտիկոս Կ. Պոլսոյ պատրիարքը կը գրէ Ս. Սահակ կաթողիկոսին « և աղանդոյդ Բորբորիտոնաց կամ հաւանի և կամ հալաճի ի քումմէ վիճակէդ (Մ. Խորենացի Գ. ձե): Եղիս կաթողիկոսը երբ կ'իմանայ թէ Աղուանից ներսէս Բակուր կաթողիկոսը քաղկեդոնական եղած է՝ « ի ձեռն Ումարայ արտը (զՆա) անարգանօք, և ձեռնադրէ այլ ուղղափա՞ս՝ ի տեղի նորա » (Վարդան, զլ. ԼԸ. էջ 72):

Կաթողիկոսին պարտքն է դարձեալ կղերին բարոյականին ուշադիր ըլլալ. արգելուլ եկեղեցական անուղղայ պաշտօնէից՝ որ չմտտակարարեն եկեղեցւոյ խորհուրդները և երբ հարկ է՝ Բանադրել զանոնք, ըլլայ եպիսկոպոս, ըլլայ վարդապետ. ինչպէս որ Անանիա կաթողիկոսը 954ին կը նզովէ գլխորով, որուն նզովակաթուղթը հրատարակուեցաւ Արարատ ամազգին մէջ՝ այսպիսի խորագրով. « Տեսա՛ն Անանիայի Հայոց կաթողիկոսի՝ պատճառ յաղագս գլխորով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոս ». ինչպէս որ նաեւ Կոստանդին կաթողիկոս (ժ՛ի դար) կը բանադրէ Գրիգոր՝ Լեհահայոց եպիսկոպոսը (Թէոդորոս կաթողիկոսի գրած կոնդակին համեմատ). « Յետ այնորիկ մեր նախնին տէր կոստանդին գրեաց ասացեալ Գրիգոր չեպիս-

1. « Արարատ » ամսագիր յէջմիճին, Լ տարի, էջ 275-88.

կոպուրի՞ գիր քանադրանաց, որ առաւել հատու էր քան զերկապոյրի սուսեր, որ մինչև է ի պակասել շնչոյն հատանէ՛ :

Կաթողիկոսին պարտքն է ամէն տարի շրջագալել եպիսկոպոսանիստ քաղաքները, քննելու անոնց զործերը, ինչպէս որ յիշատակարանի մը մէջ կը կարդանք (վարք Սարգիս Շնորհաւույ) ի կաթողիկոսութեան Բարսղի « Սովորութիւն էր Հայոց կաթողիկոսացն յառաջն շրջել ամ յամէ ընդ Հայք, և հայրական խնամօք ուղղել զամենեանն ի կանոնական սահմանն » : Գարձեալ եթէ նա չկարենայ ամէն կողմ այցելել՝ շրջաբերական թղթերով պիտի խրատէ կղերը և ժողովուրդը :

Կաթողիկոսին զխաւոր պարտքն է նաև Միւռոնի օճնութիւնը, որուն իրաւասութիւնը միայն իրեն տրուած է. « Կաթողիկոսն ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տայ զմեռոնն » : Իր օրհնած մեռոնը միայն պիտի բաշխուի բոլոր թեմերուն մէջ, ինչպէս որ « Կարգ կանոն » ին մէջ ալ կը գրուի « Համաձայն նախնական օրինաց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ մի միայն կաթողիկոսն ունի իրաւունք միւռոն օրհնել բոլոր Հայոց եկեղեցեաց համար » (ԳԼ. Բ. յօդ. 9) :

Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԻՐԱՆԻՆՔԸ

Ինչպէս որ կաթողիկոսն ունի իր պարտքերը առ ազգը՝ այսպէս ազգը առ կաթողիկոսը : Քանի որ նա օրինաւոր կերպով բարձրացած է կաթողիկոսական աթոռոյն վրայ՝ պէտք է որ Հայաստանեայց եկեղեցին յիշէ իր անունը պատարագի և « Ասասցուք » ի մէջ. և ասոր ժԱ դարու վկայութիւն մ'ունինք. կը գրէ Մատթէոս Ուռհայեցին՝ թէ երբ Յովհաննէս Թաւադարը Գէոսկորոսը Պետրոս Գետադարձի կենդանութեան օրով ապօրինաւոր միջոցներով

կաթողիկոս ձեռնադրել տուա՛ւ « Ոչ ոք ընդունէր զձեռնադրութիւն նորա որպէս օրէն է սուրբ Աթոռոյն, և ոչ քարոզեցաւ անոն նորա ի մէջ եկեղեցւոյ, ընդ այլ հայրապետն, վասն զի անարժան համարեցան զնա այնր պատուոյ » :

Այսպէս նաև « Կարգ կանոն » ին մէջ կը պատուիրուի և Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտամանց մէջ կաթողիկոսի անունը յիշատակուում է բոստ կանոնաց եկեղեցւոյ » (ԳԼ. Բ. յօդ. 6) :

Հին դարերու մէջ կ'երևայ նաև թէ սովորութիւն եղած է կաթողիկոսաց զէմբը՝ իրենց մահուանէ ետք՝ նկարել և կեղեցւոյ պատին վրայ, այս պատճառաւ Մաքենոցաց վանքին ծերունի Սողոմոն վանահայրը կաթողիկոսութիւնը յանձն կ'անու. եր կը հարցնեն թէ և ընդզէ՞ր յօժարեալ երթաս ի հայրապետութիւն » կը պատասխանէ. « Երթամ զի գեղապաճոյն նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետն տամ յորմ եկեղեցւոյն » . և մահուանէն ետքը և Կենդանագրի ի քաւարանի սրբում՝ » :

Կաթողիկոսին պաշտօնական ճանապարհորդութիւնը, Թագաւորականին նման ճոխ էր, իրեն կը հետեւէին զինուորներ, և պիսկոպոսներ . Մ. Ուռհայեցին Պետրոս Գետադարձի մէկ ճանապարհորդութիւնը այսպէս կը նկարագրէ. « Տանիցի ազատօքն փառաւոր արամբը երեք հարիւր՝ վառեալ զինուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երաժիշտս և կրօնաւոր քահանայս հարիւր և քսան՝ հեծեալս ի ջորոց . և հետեւակ պաշտօնեայս երկերիւս » , և այլն :

« Կարգ կանոն » ին մէջ իշխանութիւն տրուած է հայ կաթողիկոսին ոչս աստի՛ ճանով և Համաձայն նախնի սովորութեանց՝ կաթողիկոսը քաղաքներէն, իր կաթողիկոսարանէն, Էջմիածնի վանքէն ելանելու և մտանելու ժամանակ իրաւունք ունի ու-

1. Տես Կամենեց. էջ 11 :
2. Ն. Նամբրոնացւոյ Մեկնութիւն պատարագի, սպ. վճիւռ. էջ 82 :

3. Մատթէոս Ուռհայեցի, ԽԹ. էջ 88 :
4. Հմմտ. Յովհաննէս Պատմաբան և Վարդան :
5. Մատթէոս Ուռհայեցի. էջ 122 :

զեւորիլ ամենայն փառքով և պատուով իր ազգի կողմէն ր: (Գ. Ֆ. յօդ. 7):

Մի անգամ միայն կը յիշուի կաթողիկոսին առջեւէն զաւազան տանելը, Պետրոս կաթողիկոսը և յորժամ երթալը ի պալատ թագաւորին (Յունաց) նախ զհայրապետական Գաւազանն յատուց տանելին (Մ. Ուռհայեցի ՀԻ): Սակայն Վարդան պատմագրին յիշատակած խաչն ալ կրնայ Գաւազան՝ հասկցուիլ. նա Բարսղէ վրայ խոսելով կը գրէ. « Բայց գիտայն երկաթի ձեռագործ առաքելոյն թաղէոսի՝ որ տանէին առաջի (կաթողիկոսին), ընկէց բարձօղն ի ծովակն ր (Վարդան, էջ 113-4). և Ալփաւանայ որդին Մէլիք-շահ՝ թոյլ կու տայ որ Բարսղէ և վերացեալ խաչիւ ր իր առջեւ գայ (Վարդան, էջ 104):

Ուրիշ զէպը մը եւս կը պատմէ Մ. Ուռհայեցին ուր կը տեսնուի կաթողիկոսի աթոռոյն պատուուիլը: Երբ Պետրոս կաթողիկոսը կ'այցելէ Յունաց թագաւորին պալատը, արքայն՝ ոսկեայ աթոռի մը վըրայ կը նստեցնէ զինքը. երբ կ'իջնէ և պիտի մեկնի՝ Եղիսէ եպիսկոպոսը, որ կաթողիկոսին ընկերած էր՝ կ'ուզէ աթոռը միասին տանիլ. պատճառը կը հարցնէ թագաւորը, նա կը պատասխանէ. « Ո՛վ թագաւոր, հայրապետական աթոռ է, և ոչ ոք արժանի է ի սմա նստել՝ բայց միայն տէր Պետրոսի ր: Թագաւորը թոյլ կու տայ (Մ. Ուռհայ. էջ 124):

Հ. Մ. ՊՅՈՒՆԵԱՆ

1. Հայրապետական կամ Արքեպիսկոպոսական զաւազանը խաչածեւ է. (Հմտ. զւ. 2):

Պ Թ Ո Ղ Ի Պ Ի Ո Ն Ն

Նոյեմբերի երբ քամին
Անցնի վրանէդ մոխրին,
Սիրուն ծաղկուեթ, զեփիւռիկ
Կարծեցէք զայն, — մի՛ թողմիք:

Թէ խոսելով իմ կեանքէս
Ձեզի դիմեմ՝ զաղտնապէս,
Կուրծքիս վըրայ երբ զբուրիք՝
Սիրեցէք զիս — մի՛ մնանիք: —

Բորգմ. Հ. Ղ. ԲՈՒԿԵԱՆ

ԱՊՈՒ

Փետայի մը նման, վարդենեաց ճամբէն
Երբ զբարթ զէմքով Արեւը կու գայ,
Բընութիւնն՝ հագիւ կոպերը բացած՝
— Կոպեր՝ նըմանող ծաղկի կոկոնին —

Իր նըկարագարդ քօղը կ'յարգարէ.
Քօղը՝ գոր Գարունն սարլեեգործէց,
Եւ զբրկեց իրեն՝ իբրեւ մի նըւէր,
Ակունքներու հետ՝ իր հարսանեաց օր . . .

Ո՛րքան, ո՛վ երկինք, բարետիրտ ես գուն.
Անհնուութեամբբը, աղաչանքով վրայ,
Ուսքս իշար արդ ծովի մը դէմքով
Փոխած համբուրիւնդ՝ անլուռ բարբառի,

Բարբառ՝ ինձ, աւաղ, անըմբռնելի.
Աշքան ձայներու ներքեւ, անողոք
Լըտութիւնըդ դեռ կը յարասեւէ.
Եւ ես Գագոսիթին կ'աղայնեմ ի զուր.
Կուրթի նման քարէ՝ չի պատասխաներ . . .

Հեռուն, լիններն են օդին մէջ կախուած.
Փոքրած ալիքներ, որուն վըրէն մէջ՝
Հոգիս՝ օրորուող նաւակին մը նման՝
Կ'անցնի երկընթիւ աներդ ովկիանէն:

Մըթութեան մէջ խոր, աչքերուս համար,
Կը փրածը ալիքներ, որուն վըրէն մէջ՝
Հիմակ վայրկեանն է արարչագործութեան.
Կը ծաղկի քառոս՝ առջի ճանանչն:

« Աւա՛օ » կ'երգէ իրերը բոլոր.
Սիրտը կ'ուրանայ. « Գիշեր է դեռ խոր ».
Ամէն իր ունի այն ուրբասութիւն.
Ձոր րուպէ մ'ի զուր խընդրեմ իրերէն:

Կուսպեղ լինէր, ծաղիկներ չըքնաղ,
Չըպտեցէք, իմ տեղս ալ, օ՛ն ժրպտեցէք.
Ձեզի կը շնորհեմ իմ կարգս, իրաւունք.
Տըբրութիւնն է իմ վայելքը միակ:

Կը դիմեմ իր գրիկ, ինչպէս որդին՝ մօր.
Ալ թէ հանգրիսի համար իր անոջ.
Կը ճաննում ի լրոյ, ի լրոյ միայն՝
Տարտամ տըխրութիւնն . . . առանց պատճառի:

Կը տեսնեմ արեւն . . . ու միանգամայն
Գիշերն՝ որ իմ շուրջ ահա կ'երկայնի.
Գիշերն՝ ուր գտնէ արեւ նայուածքով
Չարձակեր իր հեզ նըշոյն՝ Արուսեակ:

Իմ ժամացոյցն է իմ սիրտը միայն.
Իբ բարբառեաց հետ սըլաքս շարժչ.
Ո՛րքան դանդաղ է այժմ անոր ընթացք.
Ո՛չ. գիշեր է դեռ, և արեւն՝ երգչ:

Ըսկեպոսիկ եմ արդ. շուրջս, այս պահուս,
Ամէն ինչ պատրանք՝ երեսոյթ մ'է սուտ.
Սիրան է, սիրտ մարդուն՝ արեւը միակ,
Որով հէզ աշխարհ կը լուսաւորուի . . .

ԱՐՄԱՅՈՍ